«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի ստեղծագործական և հետազոտական հմտությունների զարգացումը Ռաֆֆու ազատագրական պայքարի թեմայով վեպերի ուումնասիրման միջոցով
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Արեգնազ Մելիքսեթյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԿԳՄՍ նախարարության «Գյումրու Ակադեմիական վարժարան»

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1

Ազգային-ազատագրական պայքարի թեման

Ռաֆֆու ստեղծագործություններում.....4

1.1Կայծեր.....7

1.2 Ջալալեդդին.....11

Գլուխ 2

«Խենթը» վեպը.....14

Եզրակացություն 25

Օգտագործված գրականության ցանկ.....27

Ներածություն

Հայ ժողովրդի ապագան, նրա պատմական ճակատագիրը Ռաֆֆու գրական և հասարակական գործունեության, հայրենասիրական խորհրդածությունների բարոյահոգեբանական առանցքն են: Մեծանուն գրողն իր ողջ կյանքով ու գործունեությամբ անձնավորել է հայրենիքի ազատագրման, օտար զավթիչների դեմ պայքարի, նրա տնտեսական ու քաղաքական անկախության ձեռքբերման ձգտումը: Ռաֆֆու սոցիալ-քաղաքական հայացքները չեն կորցրել իրենց պատմական, տեսական և գործնական հետաքրքրությունը նաև այսօր: Դրանք ամենից առաջ վերաբերում են ազգային միասնության, գործուն հայրենասիրության՝ որպես յուրաքանչյուր ազգային անհատի քաղաքացիական գիտակցության ձևավորման, հրատապ հարցերին:

Ռաֆֆին, լինելով ազգային ձգտումների ու գաղափարների ակտիվ կրողն ու զարգացնողը, հայ ժողովրդի վերածնունդը սերտորեն կապեց ազգային և սոցիալական ազատագրության, հավասարության, արդարության ու ազատության վեհ գաղափարների կենսագործման հետ: Նա համոզված էր, որ ազգի քաղաքական ազատագրումը ուղի կհարթի նրա տնտեսական ու սոցիալական ազատագրման համար:

Սոցիալական և ազգային խնդիրների միասնական լուծման դիրքերից ելնելով՝ Ռաֆֆին գտնում էր, որ անհրաժեշտ է ոչ միայն թոթափել պարսկա-թուրքական լուծը, ջախջախել բռնակալության շղթաները և քաղաքական անկախության հասնել, այլև արմատական վերափոխումներ անցկացնել ներազգային հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նա համոզված էր, որ հայ ժողովրդի քաղաքական ազատագրությունը ազգի ապրելակերպի, նրա հոգևոր կյանքի էական վերափոխման ու բարենորոգման նախադրյալն է:

Նպատակները.

1. Ձևավորել հետազոտական հմտություններ գիտատեսական գրականության ուսումնասիրման միջոցով,
2. Զարգացնել ստեղծագործական հմտություններ բերված թեմայի համակողմանի ուսումնասիրմամբ
3. Արժևորել համազգային պայքարի դերը պետականության ամրապնդման գործում

Խնդիրները.

1. Բնագրերի ուսումնասիրում,
2. Թեմային առնչվող գիտատեսական գրականության ուսումնասիրում,
3. Ներկայիս քաղաքական իրավիճակի վերլուծություն և գնահատում:

Արդիականություն: Աշխատանքն արդիական է, քանի որ հայ ազգը անդադրում պայքարի մեջ է մեր երեսուն տարվա թշնամի պետության դեմ: Ասվածի վկայությունը վերջին 44-օրյա պատերազմն էր և նրա պատճառների ու հետևանքների մասին մինչ օրս հնչող իրարամերժ պարզաբանումները: Մեր կարծիքով դեռևս ուշ չէ մատաղ սերնդին հայդուկների ազգայնամետ գաղափարներին հաղորդակից դարձնել և ոգեշնչել նրանց Ռաֆֆու կերտած և պատմության մեջ իրենց անմահ անունը դրոշմած կերպարներով և իրենց անձնուրաց գործունեությամբ: Ի զուր չէ, որ ժամանակին հայ հայդուկները ևս ոգեշնչվել են հենց Ռաֆֆու ազատագրական պայքարի թեմայով գրված վեպերով:

Գլուխ 1

Ազգային-ազատագրական պայքարի թեման Րաֆֆու ստեղծագործություններում

Րաֆֆու ստեղծագորխությունները, նշանավորելով հայ գրականության աննախադեպ վերելքը, միաժամանակ ազատագրական պայքարի, հայրենասիրական գաղափարների անսպառ աղբյուր են թե՛ ժամանակակիցների, թե՛ հաջորդ սերունդների համար:

Հայրենասեր գրողը լուրջ եզրահանգումներ է կատարել նաև ազգային-ազատագրական շարժման սոցիալ-դասակարգային բովանդակության վերաբերյալ՝ իր հույսերը կապելով ոչ թե վերնախավերի, այլ առաջադեմ մտավորականության և երիտասարդների կողմից ղեկավարվող ազատասեր ժողովրդի հետ:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանի արտացոլումը հատուկ տեղ է գրավում տաղանդավոր վիպասան Րաֆֆու ստեղծագործություններում: Ազգային-ազատագրական պայքարի գաղափարները վեր հանող այնպիսի երկերում, ինչպիսիք են «Ջալալեդդին»-ը, «Խենթը» և «Կայծերը» գրողը հատուկ կերպով է արտահայտել թուրքական դաժան լծից արևմտահայությանն ազատագրելու գաղափարները:

Րաֆֆին առաջինն էր հայ վիպասանության մեջ, որ անդրադարձավ արևմտահայության «թշվառ դրությանը» և առաջադրեց ազատագրման ուղիները: Արևմտահայության կյանքի նկարագրման, հայ ժողովրդի ազատագրության խնդիրների արծարծման տեսակետից բնորոշ են Րաֆֆու «Ջալալեդդին», «Խենթը» և «Կայծեր» վեպերը:

«Ջալալեդդին»-ը Րաֆֆին հեղինակել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայերի, հատկապես Աղբակի հայության կոտորածի և դրա հետևանքով տեղի ունեցած գաղթի անմիջական ազդեցության տակ:

Վիպասանը «Ջալալեդդին»-ի մեջ առաջ է քաշել թուրքական բռնակալության դեմ համազգային, համաժողովրդական ազատագրական պայքար ծավալելու, զինված ինքնապաշտպանություն կազմակերպելու, հայ ժողովրդի համար հանգիստ ու բախտավոր կյանք ստեղծելու հարցերը: «Ջալալեդդին» վիպակում Րաֆֆին անխնա քննադատության է ենթարկել հայ

հոգևորականությանը՝ ստրկության հանդեպ հլու հնազանդություն քարոզելու և ազատատենչ ձգտումներն սպանելու համար։

Հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը, կապված 1877—78-ի ռուս-թուրքական պատերազմի իրադարձությունների հետ, ամբողջ խորությամբ բացահայտվել են Ռաֆֆու ստեղծագործական տաղանդի հնարավորությունները։ Մի շարք հրապարակախոսական հոդվածներում, «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» (1878) ուղեգրության մեջ, «Ջալալեդդին» (1878) վիպակում, վերլուծելով ազատագրական շարժման իրական հանգամանքները և միանգամայն ապարդյուն համարելով Հայկական հարցի լուծման եվրոպական դիվանագիտության ուղին, Ռաֆֆին առաջադրում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը՝ արևմտահայ ժողովրդի գլխավոր խնդիրը համարելով այդ գաղափարի «անդադար և անընդհատ նախապատրաստությունը»։ Այս ծրագրի գեղարվեստական արտահայտությունը հանդիսացան «Խենթը» (1881) և «Կայծեր» (հ. 1-2, 1883-87) վեպերը։ «Կայծեր»–ը XIX դ. հայ ազատագրական շարժումների գեղարվեստական հանրագիտարանն է, նորագույն շրջանի հայոց պատմության ասք-էպոսը։ Իր ընդգրկումներով, պատմա-փիլիսոփայական հագեցվածությամբ և գեղարվեստական հյուսվածքով նա զարգացման նոր աստիճանի բարձրացրեց հայ ազգային վեպը։ «Դավիթ Բեկ» (1882) վեպն արտացոլում է XVIII դ. սկզբի ազատագրական շարժման իրադարձությունները և հայոց պետականության ստեղծումը Սյունիքում։ «Խամսայի մելիքություններ» (1882) ժամանակագրությունը ներկայացնում է Արցախ–Ղարաբաղի մելիքների մաքառումը անկախության համար։ «Սամվել» (1886) վեպի նյութը վերաբերում է IV դ. կեսի սոցիալ–քաղական բարդ իրադարձություններին, երբ Պարսկաստանի և Բյուզանդիայի ձեռքն անցած հայոց թագավորությունը ձգտում էր հաստատել ժողովրդի էթնիկական ինքնությունն ու պետական անկախությունը։ «Պարույր Հայկազն» (1882) վիպակում, պատմական զուգահեռի վրա դնելով Մովսես Խորենացուն և Պարույր Հայկազնին (Պրոերեսիոս), Ռաֆֆին կոսմոպոլիտիզմը հակադրում է հայրենասիրությանը, հաստատելով, որ անհատի փառքի հավերժությունն ու անմահությունն անբաժանելի են հայրենիքի գաղափարից։ Գրողի պատմափիլիսոփայության սկզբնակետը ազգային միասնության գաղափարն է։

Ընդհանրացնելով անցյալի փորձը՝ նա ազատագրական շարժման դասերից այն հետևությունն է անում, թե ազգային դժբախտության պատճառը անմիաբանությունն է, որը հայոց

պատմության վրա դրոշմել է դավաճանության կնիքը: Սակայն, որպես գեղագետ, Ռաֆֆին դավաճանությունը դիտում է ոչ միայն սոցիալական ու քաղաքական շարժերի տեսանկյունից, այլև այն փոխադրում է մարդկային հոգեբանության ոլորտը: Նրա վեպերի հերոսները, պատմական անձ լինելու հետ մեկտեղ, բարոյական որոշ սկզբունքի կրողներ են և արտահայտում են մարդկային վարքի էթիկական գնահատականը: Ըստ այդ գնահատականի՝ հայրենասիրությունը բացարձակ է, որին պետք է զոհաբերել ամեն ինչ:

1.1Կայծեր

Վեպի գլխավոր գաղափարը ազգային ու սոցիալական ազատության գաղափարախոսությունն է: Հերոսները մշտապես հանդես են գալիս բռնության ամեն տեսակի դրսևորումները տապալելու քարոզչությամբ: Այս իմաստով կարևոր է անդրադառնալ նրանց հերոսական նկարագրի ռաֆֆիական մեկնաբանմանը: «Հայդուկներ» վերնագրած իր փոքրածավալ հոդվածում վիպասանը նախ մեկնաբանում է «հայդուկ» բառը՝ նշելով, որ այն գող կամ ավազակ չի նշանակում. «Հայդուկը բնական արտահայտություն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի ,- գրում է Ռաֆֆին: – Հայդուկը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ…Հայդուկը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը, այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք ու ազատության բաղձանք...:

...Մեզանում դեռ գրականությունն ուշադրություն չէ դարձրել այս տեսակ երեւույթների վրա, հայդուկները, ավազակները մեզ մոտ դեռ չեն մտել վեպերի կամ բեմական գրվածքների մեջ, թեև նրանք խիստ հաճախ հայտնվել են և անհետացել ժամանակի հոսանքի հետ: Հայդուկը եւ ավազակը չեն ճանաչվել մեզանում որպես պատմական անձնավորություններ, որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաջազնական կյանքից» [7, էջ 96] :

Հատկանշական է, որ Ռաֆֆին մտադիր է եղել «Կայծերը» վերնագրել «Հայդուկներ» և վեպի առաջին տպագրության սկզբում տեղադրել է մի փոքրածավալ, բայց ուշագրավ առաջաբան՝ «Հայդուկներ» վերնագրով, որը հայ իրականության մեջ այդ պատմաքաղաքական երևույթի թերևս առաջին խոր և բնորոշ գնահատականն էր:

Իրոք, Ռաֆֆու հերոսները՝ Ասլանը, Կարոն, հայ ֆիդայու նախատիպերն են և պայքարի օրինակ են եղել ազգային-ազատագրական պայքար մղող երիտասարդության համար:

***

«Կայծեր»-ը գրվել է հիշատակարանային վեպի սկզբունքով: Ամեն ինչ պատմում է հերոսներից մեկը՝ Ֆարհատը, որն ականատես է լինում բոլոր իրադարձություններին և վերարտադրում է իր հայեցակետը: Շփվելով ազգային–ազատագրական պայքարի գաղափարախոսությունը արտահայտող մարդկանց հետ՝ Ֆարհատը դեպքերը վերապատմելու ընթացքում դրսևորում է իր ինքնագիտակցության ձևավորումը: Հայ ժողովրդի մեջ ի սկզբանե արմատացած էր ստրկական հոգեբանությունը, որը Ֆարհատի մտածողության մեջ կամաց-կամաց տեղի է տալիս ազատագրական մտածողությանը, թեև Ֆարհատը ազատագրական պայքարի գլխավոր մասնակիցներից չէր: Այդ ստրկական մտածողությունը գալիս էր դեռ ընտանիքից, իսկ Տեր–Թոդիկի դպրոցն այն ավելի է ամրապնդում, որը քարոզում էր կույր հնազանդություն: Այս ստրկական մտածողությամբ և թշվառ վիճակում, երբ Ֆարհատը որոշում է գետը գցվելով՝ վերջ տալ իր կյանքին, հանդիպում է Կարոյին, որը նրա դասընկերն էր և վաղուց էր փախել Տեր–Թոդիկի դպրոցից: Կարոն և իր ընկերները (Ասլանը, Սագոն) որսորդ Ավոյի և վերջինիս դուստր Մարոյի հետ միասին դառնում են Ֆարհատի նոր դաստիարակները: Ֆարհատը Ասլանի հետ ճանապարհորդում է Հայաստանի տարբեր վայրերում և անձամբ է տեսնում հայ ժողովրդի թշվառ վիճակը, որը, հետամնացության շղարշով կուրացած, ենթարկվում է ազգային և օտար հարստահարիչների գազանային շահագործմանը, բարբարոս տիրապետողների նողկալի կամայականությանը: Կյանքը վերափոխում է Ֆարհատին և նա հանգում է ազատագրության պայքարի գաղափարներին:

Վեպի հերոսները (Ասլան, Կարո, Որսորդ Ավո, …) ազատագրական պայքարի հույսերը կապում են միայն հասարակ ժողովրդի հետ: Սակայն, ազատագրական շարժման գաղափարախոսությունը միատարր, միասնական բնույթ չի կրում: Ազատագրական շարժման կազմակերպման հարցում տարբեր են Ասլանի և Կարոյի տեսակետները: Ասլանը լուսավորության և գիտության երկրպագուն է:

Նրա տեսակետով ժողովրդի ազատագրության իդեալը կարելի է կենսագործել կրթության և գիտության միջոցով: Նա ընդունում էր նաև ժողովրդի ազատագրության ուղին, սակայն, նրա

կարծիքով այդ հնարավոր է այն դեպքում, եթե ժողովուրդը հասել է ինքնագիտակցության և տիրապետում է ազատագրության գաղափարներին։ Սակայն, ժողովուրդը դեռ այդ մակարդակին չի հասել, ուստի պետք է նախ նախապատրաստել նրան և նոր անցնել ազատագրական պայքարին։ Սա է Ասլանի տեսակետը։ Կարոն ավելի արմատական է և պահանջում է սուրն ուղղել ոչ միայն օտար բռնակալների, այլև ներքին հարստահարիչների դեմ։ Ասլանը դեմ է այս գաղափարներին և գտնում է, որ նախ պետք է ժողովրդի մեջ սերմանել ազատագրական ոգի և նոր հարել ապստամբության։ Սակայն, քանի որ չկա մի զորեղ ձեռք, որ բարձրացնի ժողովրդին և կանգնեցնի մարդկային ազատ իրավունքների վրա, ուստի մնում է միայն բորբոքել նրա կենսական ուժերի դեռևս անզոր կայծերը, որպեսզի գալով ինքնագիտակցության՝ ինքը ելք որոնի տիրող հակասական պայմաններից դուրս գալու համար։ Այս տեսակետին են հարում վեպի շատ հերոսներ, սակայն, այդ հարցում այլ պատրանքներ է փայփայում Կարոն։ Կարոն հանգում է բռնությամբ հասարակական չարիքը կործանելու մտքին։ Նա կարծում է, որ անհրաժեշտ է բռնի ուժով խորտակել ստրկական լուծը, հասարակությունը ազատագրել սոցիալական և քաղաքական ստրկությունից, այնուհետև մարդը ինքը կտիրապետի ազատության գաղափարին։

Ինչքան էլ Ռաֆֆին փորձում է հիմնավորել Ասլանի գաղափարախոսությունը, այնուամենայնիվ, ի վերջո հակվում է Կարոյի դավանած գաղափարին։ «Ամրոցի աղջիկը» գլխում Ռաֆֆին ներկայացնում է այնպիսի պատկերներ, որոնք հաստատում են Կարոյի դավանած սկզբունքների արդարացիությունը։ Ռաֆֆին ներկայացնում է Հայաստանը երկար տարիներ հետո. Հայաստանը ենթարկվում է բազմաթիվ աղետների՝ սով, համաճարակ, բարբարոսական հարձակումներ, որոնք կործանում էին երկիրը, բայց, ի վերջո, այս ամենից հոգնած ժողովուրդը դիմում է զենքի և կործանում բոլոր չարիքները։ «Կայծեր»-ում դրսևորվում է դարաշրջանի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը։

«Կայծեր» վեպը, ինչպես Ռաֆֆին է ասում. «Մի կողմից պատկերացնում է մեզ Տաճկահայաստանի հայերի հիվանդությունը՝ իր բոլոր փտեցնող, օրըստօրե լուծվող և քայքայվող կողմերով, իսկ մյուս կողմից ցույց է տալիս այն միջոցները, որոնցով պետք է բժշկել հիվանդին»։ Նշված հատկանիշներում էլ դրսևորվում է վեպի գեղարվեստական առանձնահատկությունները։ Մի կողմից բնաշխարհի, ժողովրդի նիստ ու կացի հարուստ ու հոյակապ պատկերներով, մյուս կողմից կյանքի հակասությունները լուծելու գաղափարախոսությամբ հանդես եկող ռոմանտիզմի

սկզբունքներով։ Քանի որ վեպի հիմնական գործող հերոսները ռոմանտիկական գաղափարատիպեր են և վեպի կենտրոնական խնդիրը այդ հերոսների արտահայտած գաղափարախոսությունն է, ուստի և վեպը իր հիմնական ուղղությամբ դառնում է ռոմանտիկական։

Այն հեղինակի բնորոշմամբ ներկայացնում է մեր իրականության կատարյալ նկարագիրը իր պատմական, ազգագրական, աշխարհագրական ճշգրտություններով։ Դա հայ ժողովրդի կյանքի մի պատմական դարաշրջանի հանրագիտարան է, որը ընդգրկում է ժողովրդի սոցիալ-հոգեբանական բնաշխարհի, պատմական անցյալի բազմաբովանդակ նկարագիրը։ Այն յուրահատուկ ստեղծագործություն է, որտեղ չկա կոնֆլիկտ սովորական իմաստով կամ միասնական սյուժե։ Հայ գրականության մեջ ոչ մի երկ այնպիսի ուժով, այնպիսի ընդգրկությամբ չի արտահայտել հայ ժողովրդի ազատագրական պայքարի ոգին, 1870–1880–ական թվականների սոցիալական հոգեբանությունը, ինչպես «Կայծեր»-ը։ Վեպի ոգին ազգային և սոցիալական ազատագրության գաղափարն է։

Ֆարհատի կերպարով Ռաֆֆին ներկայացրել է արևմտահայությանը։ Ի դեմս Ֆարհատի՝ Ռաֆֆին մարմնավորել է ժողովրդի նոր սերնդի հավաքական կերպարը։ Ֆարհատի ընտանեկան պատմության, կրթության, առհասարակ նրա կենսագրության մեջ Ռաֆֆին այլաբանորեն խտացրել է պարսկահայ և արևմտահայ ժողովրդի սոցիալ–տնտեսական կյանքը, իսկ նրա մտածելակերպի մեջ իր անդրադարձն է գտել ժողովրդի կրոնական և սոցիալ-հասարակական գաղափարների հոգեբանությունը՝ իր բոլոր ստվերոտ կողմերով։ Այն, ինչը կաշկանդում էր արևմտահայությանը և թույլ չտվեց նրան հետևելու բալկանյան ժողովրդների օրինակին։

Արհավիրքների, բռնության կապանքների, այրող հրդեհի միջից է ծնվում Ռաֆֆու երազած «անհայտ ապագան»։ Սոցիալական և քաղաքական ստրկությունից ազատագրված մի իդեալական հասարակական կազմակերպություն, ուր իշխում է բանականության և անձի ազատության իրավունքը։ Ռաֆֆին իր քննադատական ոգով ցրում էր տիրող կարգերի գոյության պայմանական պատրանքները և զինում մարդկանց ապագա ներդաշնակ հասարակության իդեալներով։

Գրականագետ, ակադեմիկոս Ս. Սարինյանը գրում է. «Ռաֆֆու ուտոպիստական հասարակության հիմքը համայնքն է։ Դա գիտության և տեխնիկայի վրա հիմնված աշխատանքի ընդհանուր իրավունքի համայնակեցությունն է։ Այստեղ իշխում են ազատությունն ու

հավասարությունը: Այստեղ տերեր, ստրուկներ չկան: Հասարակական սեփականության իրավունքը հավասարապես բաժանում է հասարակության յուրաքանչյուր անդամ: Ռաֆֆու մեծ արժանիքն այն է, որ նա մասնավոր սեփականության մասին ամրապնդված գաղափարախոսությանը հակադրեց համայնական սեփականության գաղափարը» [4, էջ 196]:

1.2 Զալալեդդին

1877-1878 թվականների ռուս թուրքական պատերազմը նոր թափ է հաղորդում ազգային-ազատագրական շարժմանը: Հայ մտավորականությունը գտնում էր, որ վերջիվերջո հայերը կկարողանան դուրս գալ թուրքի լծի տակից, կկարողանան նվաճել իրենց ազատությունը: Ռաֆֆին այդ մտավորականներից մեկն էր: Նա իր հոդվածներու և երկերում կոչ էր անում հայերին համախմբվել և պայքարել իր ազատության համար: Դեպի ազատությունը տանող գաղափարներ է առաջադրում Ռաֆֆին, առաջարկում ծրագրեր:

Զալալեդդին վիպակում Ռաֆֆի դեռ չի ներկայացնում իր ծրագրերը, այլ իր գաղափարական հերոսների միջոցով արծարծում է այն խնդրիները, թե ինչ վիճակում ենք մենք, և որն է դրա պատճառը:

Շեյխ Զալալեդդինի ավերիչ արշավանքների սկսվելուն պես հեռավոր դամասկոսից Բագրևանդ է գալիս հայազգի Սահրատը՝ գլխավոր գաղափարակիր հերոսը: Տասը տարին իր երկրից արտաքսված տղան վերադառնում է գույժը լսելուն պես, որ փրկի իր սիրած աղջկան՝ Ասլիին:

Հայոց եզերքում նա տեսնում է հրից ծխացող տներ, ամենուր ընկած դիակներ, ջարդից մազապուրծ եղած հայեր: Սակայն նա կարեկցանքի փոխարեն ատելությամբ է նայում այդ ամենին, քանի որ այդ դժբախտության մեջ միակ մեղավորը համարում է հային: Այստեղ գաղափարական հերոսը սկսում է քննել հայի դժբախտ վիճակը և հասնում այն եզրակացությանը, որ եթե հայը չի կռվում իր կյանքի համար, եթե մի ազգ ընդդիմության շնորհք չունի, նա պետք է ընկնի, անհետանա, ոչնչանա:

Գաղափարակիր հերոսի կերպարը բացահայտվում է հոր հետ հանդիպման ժամանակ: Որդին տեսնում է հորը կիսամեռ ընկած գետնին:

Հայրը ուզում է օրհնել որդուն, բայց որդու շուրթերից անեծքի խոսքեր է լսում: Որդին մեղադրում է հորը, մեղադրում իր ճակատագրի համար, ասում, որ երկրի այժմյան վիճակի միակ մեղավորը հենց հայերն են, ովքեր չեն կռվում, մեղք են համարում զենք բարձրացնելը, իրենց կյանքը պաշտպանելը և մորթվու են կենդանիների պես: Ինքն անգամ վռնդվել էր հայրական տանից միայն նրա համար, որ սիրում էր զենքեր, չէր ուզում ըստ հոր ցանկության հոգևորական դառնալ: Հոգեբանական առումով Ռաֆֆին համոզիչ է կերտել Սահրատի կերպարը: Ըմբոստ, բոլորից տարբերվող անձին հասարակությունը վանում է իրենից, հեռացնում, բայց այդ հասարակությունից դուրս էլ տեղի է ունենում նրա գաղափարական հասունացումը: Ռաֆֆու հերոսը հասկանում է իր ժողովրդի դժբախտ կյանքի պատճառը, բայց իր տասներկու հոգանոց ավազակախմբով ոչինչ չէր կարող անել պետական ռեժիմի դեմ, ամբոխը ինքը պետք է հասկանար իր դժբախտության պատճառն ու սկսեր պայքարել:

Գրեթե բոլոր ստեղծագործություններում Ռաֆֆին իր հերոսներին դնում է ընտրության առջև՝ սիրած աղջիկը, թե սիրած հայրենիքը: Հերոսների մոտ մասնավորը ստորադասվում է ընդհանուրին և հերոսը ընտրում է հայրենիքը, դրանով Ռաֆֆին ներկայացնում է, որ անգամ սիրո հզոր ուժն է ստորադասվում հայրենիքի սիրո հանդեպ: Վեպի գաղափարական հերոսներից են նաև Սարհատի խմբից Դայի-Բաբան՝ գիժ հայրը և Քիթաբ-Դալիսին՝ գրքից խելագարվածը:

Դայի-Բաբան հոգևորական էր, ով իր ձեռքն էր վերցրել խաչի փոխարեն սուրը և կռվում էր թշնամու դեմ: Վանքի մոտ քրդերին սպանելուց հետո խնջույքի սեղանին նախկին քահանան գինու բաժակով կենաց է ասում՝ չնվիրելով իրենց պապերի ոսկորներին: Կենացում Դայի-Բաբան ասում է. «Եթե մեր հայրերը այս վանքերի տեղը բերդեր շինեին, այս սուրբ անոթների ու խաչերի փոխարեն զենքեր գնեին և մեր տաճարներ խնկարկվող անուշահոտության փոխարեն վառոդ ծխեին, այն ժամանակ հայոց աշխարհը բախտավոր կլիներ, քրդերը չէին կարողանալ քանդել ու ավերել այն» [6, էջ 58]:

Նույն սեղանի շուրջ կենաց է բարձրացնում նաև Քիթաբ-Դալիսին: Նրա անունն անգամ հուշում է, որ գրքից խենթացածը պետք է որ վարժապետ լինի: Նախկին վարժապետը, ով թողել է անօգտաբեր ուսումնն ու սկսել կռվել Սահրատի խմբի մեջ, իր կենացը չի ձոնում մեր գրին ու դպրությանը: Նա ասում է. «Եթե մեր ուսումը չլցներ մեր միտքը վերացական ցնորքներով, սև

նախապաշարմունքներով չփակեր մեր աչքերը, այլ տար առողջ միտք, առողջ գաղափար, հիմա հայոց ազգը այս սգալի վիճակում չէր լինի»[6, էջ 59]:

***

1877–78 թթ.-ի ռուս-թուրքական պատերազմի տարիներին նկատելի աշխուժանում է հայ ազգային-ազատագրական շարժումը: Շատերը լիահույս էին, որ ռուսների հաղթանակով Արևմտյան Հայաստանը կազատագրվի թուրքական լծից, հայ ժողովուրդը կկարողանա նվաճել իր ազատությունն ու անկախությունը: Ոգևորությունն ընդհանուր էր: Մամուլն ու հրապարակախոսությունը հավատ էին ներշնչում, թե ռուսական զենքի հաղթանակով Արևմտյան Հայաստանը կազատագրվի թուրքական բռնատիրությունից: Ռաֆֆին հույսեր չի կապում պատերազմի հետևանքների հետ: Նրա համոզմամբ՝ ազատությունը չի շնորհվում վերուստ, և յուրաքանչյուր ժողովուրդ ազատություն կարող է նվաճել միայն սեփական ուժերով:

Ազգային-ազատագրական շարժման գեղարվեստական համապարփակ արտահայտությունը վիպասանը վարպետորեն է ներկայացրել «Կայծեր» և «Խենթը» վեպերում: Այս վեպերում հեղինակը լայն կտավի վրա ցուցադրեց հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքը, որոշակիորեն ներկայացրեց ազգային-ազատագրական շարժման հասարակական տարբեր գաղափարախոսությունների առկայությունը և դրանցից յուրաքանչյուրի իմաստն ու նշանակությունը:

«Խենթը» վեպը

Վեպն սկսվում է Բայազետի միջնաբերդի կռվի ու շրջափակման նկարագրությամբ: Թվով 1000 հայ և ռուս զինվորների զորախումբը կանգնած է 20000 քրդական և թուրքական բանակի դեմ: Միջնաբերդում չկար ջուր և պարեն: Հիվանդների ու վիրավորների թիվը հետզհետե աճում էր, իսկ մոտակա աղբյուրից ջուր բերելու փորձերի ընթացքում ամեն անգամ մոտ 20 զինվոր էր զոհվում: Միջնաբերդում ամրացած ուժերի ղեկավարը երդվում էր չհանձնվել, քանի ողջ են: Զինվորների ոգին ընկճվում է, երբ ականատես են լինում, թե ինչպես 3 օր թուրքերը կոտորում են շրջակա հայկական բնակչությանը: Վեպի հերոսը՝ Վարդանը, նույն ինքը՝ խենթը, ոչ թե ցավով, այլ

կատաղությամբ է հետևում սպանդին: Եթե թուրքերը գրավեին Բայազետի բերդը, ապա արագորեն կմտնեին Երևան: Հարկ է լինում օգնություն խնդրող նամակը դուրս բերել շրջափակող մահմեդականների օղակից և հասցնել ռուսական բանակի հրամանատարին՝ Տեր-Ղուկասովին, որպեսզի վերջինս հասներ օգնության: Մահապարտի պարտականությունը համարձակվում է իր վրա վերցնել վեպի գլխավոր հերոս Վարդանը: Նա խենթ քուրդ ծաղրածու ձևանալով՝ շրջում և տեղեկություններ է հավաքում թշնամու բանակի մասին, ապա իր նամակն ապահով հասցնում է Տեր-Ղուկասովին:

Ռուս-թուրքական պատերազմը վերջացել էր, Բեռլինի վեհաժողովի հետ կապված պատրանքները խորտակվել էին: Հայերը դարձյալ չեն ստանում սպասված ազատությունը, եվրոպական դիվանագիտության խաղն ակնհայտ էր: Հայ ժողովրդի վիճակը ոչ միայն չբարելավվեց, այլ վատթարացավ: Սուլթանի կառավարությունը ձգտում էր օրակարգից հանել հայկական հարցը և դա իրականացնելու համար դիմում էր ոչ միայն բռնի գործողությունների, այլ կիրառում էր ուղղակի ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն: Ռաֆֆին դիպուկ էր նկատում, թե Թուրքիան այդ անում է «եվրոպական տերությունների ձայնը կտրելու համար, որպեսզի ցույց տա նրանց, որ Հայաստանում հայ չկա»:

«Խենթ»-ում պատկերված են ռուս-թուրքական պատերազմի օրերը: Թուրք բարբարոսները վրեժխնդիր են լինում հայերից՝ տեսնելով նրանց համակրանքը ռուսական զորքերի հանդեպ:

***

Վեպի գլխավոր հերոսը քսանհինգամյա Վարդանն է. սև խորունկ աչքերով և հեգնական ժպիտը շուրթերին, ճարպիկ, համարձակ, նրան համարում էին թոկից փախած մարդ, որ «կյանքի ամեն մի մթին խորշ մտել ու դուրս էր եկել»:

Տանուտեր Խաչոյի զավակներից կրտսերը գեղեցիկ Լալան էր, որին տղայի զգեստներ հագցնում և Ստեփանիկ են անվանում: Նրա աղջիկ լինելը թաքցնում են՝ քրդերի չար նկրտումներից հեռու պահելու համար: Լալայի աղջիկ լինելը գիտեին և նրա վրա աչք ունեին Ֆաթթահ բեկը և Թոմաս էֆենդին: Վերջինս էլ դառնում է տանուտեր Խաչոյի բարեկեցիկ ընտանիքի քայքայման պատճառը: Այսպես է նկարագրում Ռաֆֆին այս գազանների սերը «Ամբողջ տիեզերքի մեջ չկա մի բան, որ այնպես խոնարհեցնի մարդկանց, որքան սերը: Մարդկության ամենասարսափելի հրեշները, որոնցից դողդում են աշխարհները, որոնք ներկում են արյունով

երկրները, որ ահուդոդի մեջ են պահում ազգերը, - խոնարհվում, ծնկի են գալիս սիրած կնոջ առաջ: Միայն այստեղ նրանք մարդ են, մարդկային են» [6, էջ 298]:

Լալա-Ստեփանիկի աղջիկ լինելը գիտեր նաև Վարդանը և սիրում էր նրան: Սերը փոխադարձ էր: Թոմաս Էֆենդու դավադրանքների արդյունքում ձերբակալվում են Խաչոյի որդիները, Սալմանը և Վարդանը: Լալան ստիպված փախուստի է դիմում, որպեսզի չընկնի քուրդ բեկի ձեռքը: Քանի որ պատերազմն արդեն սկսվել էր, և թուրքերի կոտորածներից փրկվելու համար ամբողջ Ալաշկերտի գավառը գաղթականության ճանապարհին էր բռնել, Լալան էլ նրանց հետ միասին գաղթում է Արևելյան Հայաստան, Վաղարշապատ, ուր և ծանր հիվանդանում է ու մահանում: Վաղարշապատում տեսնում ենք հայ հոգևորականության աղտոտվածությունը, ժանտախտային, անմարդկային, անսուրբ մտածելակերպը:

Ազատագրական շարժման մի որոշ գաղափարի արտահայտիչը ծերունի Խաչոն է: Բնորոշ է նրա և որդու միջև եղած մի խոսակցությունը: Երբ որդին ցասումով դատապարտում է հայերի պասիվությունը և պահանջում է զենքով սանձահարել բարբարոս թշնամուն, հայրը առարկում է, պնդելով, թե՝ հայերը պատրաստ չեն ապստամբությամբ նվաճելու իրենց ազատությունը. «Մեզ դժվար է և շատ դժվար է միանգամով ոչնչացնել այն, ինչ որ մեր պապերը տնօրինեցին մեզ համար: Մենք քաղում ենք նրանց ցանած հիմարությունների դառն պտուղը: Հիմա լսի՛ր, որդի՛, ես իմանում եմ, որ քո սրտի մեջ եփ է գալիս ատելությունը, ես իմանում եմ, որ ստրկությունը սաստիկ վշտացնում է քեզ. բայց դարձյալ հարցնում եմ, ի՞նչ ճար կա, ի՞նչ կարող ենք անել» [6, էջ 298]:

Այդպիսին է ժողովուրդը. այդ հոգեբանությունը նրա մեջ արմատավորվել է դարերի ընթացքում: Ուստի ազատագրական շարժումը բորբոքելու համար անհրաժեշտ է կազմակերպել ժողովրդին, արթնացնել նրա ազգային ինքնագիտակցությունը, զինել նրան ազատագրական պայքարի գաղափարախոսությամբ: Ռաֆֆին ցուցադրում է հայ ժողովրդի հիմնական խնդիրը՝ նրա թմբիրի մեջ լինելու փաստը: «Երեխայի պես են, դարերով միևնույն հարվածներն են ուտում, միևնույն պատին են դիպցնում գլուխները, միևնույն ցեխի մեջ են գլորվում բայց ոչինչ չեն զգում. այսօրվա պատահածը վաղը մոռանում են» [6, էջ 134], հայերի մեջ արմատացած էր ստրուկի հոգեբանությունը: Տանուտեր Խաչոյի դատողությունները հայերի վիճակի մասին թեև ճշմարիտ են, սակայն նա մտածում է, որ դարավոր ճակատագիրը փոխելն անհնար է, պետք էր միաբան լնել. «Մենք հայ ենք, Աստծո անեծքը գրած է մեր ճակատին. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք:

Անմիաբանությունը, երկպառակությունը, նախանձը, թշնամությունը և հազար ու մեկ տեսակ այլ չարություններ շատ ժամանակներից բուն են դրել մեր հոգու մեջ, և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը: Քուրդը մեղավոր չէ, եթե մեր մեջ միություն լիներ քուրդն ի՞նչ կարող էր» [6, էջ 115]: Սակավաթիվ այն երիտասարդները, որ համարձակվում էին դիմադրության կոչ անել ընդդեմ հարստահարիչների ու մարդասպանների, ովքեր պայքարի էին կոչում, ժողովրդի կողմից կոչվում էին խենթեր: Բայց ինչպես պատմությունն է վկայում, միայն այդ խենթերի շնորհիվ է հնարավոր առաջխաղացում, վերելք, զարթոնք: Խենթերն են հարթում ճանապարհներ, և խենթերն են, որ ապրեցրել ու ապրեցնում են մեր ժողովրդին: Այդպիսի մի խենթ է Վարդանը: Ծերունի Խաչոն չի տեսնում այնպիսի ուժեր, որոնք կարողանային նախապատրաստել ժողովրդին, իսկ որդին, ի պատասխան դրա, պահանջում է, որ ժողովուրդն ինքը հասկանա իր վիճակի ծանրությունը և ձեռք առնի ինքնապաշտպանության արմատական միջոցներ: «Ես կարծում եմ, հա՛յր, եթե ոչխարները հովիվներ և պահպանողներ չունենային, այսօր գայլերը ոչ մի ոչխար չէին թողնի աշխարհում, և դժվար կլիներ ոչխարների հոտեր կազմել: Մենք, իրավ է, ոչխար ենք, բայց առանց հովվի:

Երբ մեր վիճակը այդպես է, մնում է մեկ բան միայն գայլերից ազատվելու համար, որ մենք էլ գայլերի նման ատամներ և ճանկեր ունենանք» [6, էջ 119]:/Ասում է Խաչոյի ավագ որդին՝ Հայրապետը/:

Անակնկալ հարձակման ենթարկված Բայազետը ընկնում է վտանգավոր պաշարման մեջ: Տեղի ռուսական զորախումբը ու կամավորական ջոկատները, ամրացած բերդի կենտրոնում, հերոսաբար դիմադրում էին մոլեգնած թշնամու կատաղի գրոհներին: Բայց դրությունը չափազանց վտանգավոր էր. ջրի ու սննդի պակասը, թշնամու ուժերի գերակշռությունը բերդը դրել էին անկման սպառնալիքի տակ: Անհրաժեշտ էր կապ հաստատել դրսի հետ: Այդ խիզախ քայլը, ինչպես վերևում նշել ենք, կատարում է Վարդանը և ստանալով ցանկացած ազատությունը՝ գնում է որոնելու սիրած աղջկան: Նա անցնում է Հայաստանի տարբեր գավառներով և ականատես է լինում ազգի բնաջնջման սարսափելի տեսարանների: Բայց Սարհատի նման՝ Վարդանը ևս չի ձգտում կարեկցել սրահարված ժողովրդին. հակառակը, նա զայրույթով է նայում «դեպի այն վախկոտները, որ ոչխարի նման թույլ էին տալիս իրենց մորթել»: «Տունը աչքի առջև այրում են, զավակները կրակի մեջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են,-… դառնությամբ ասում է

Վարդանը:- Տղամարդը տեսնում է այդ բոլորը և ինքը ամենայն խոնարհությամբ պարանոցը դեմ է անում թշնամու սրին. տո՛, անիծյալ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, հետո մեռիր»[6, էջ 77]:

Վարդանի մեջ խոսում է ճնշված, անլուր անարգանքների ենթարկված ժողովրդի վրիժառության զգացումը: Նա պահանջում է բռնությամբ հատուցել տիրապետող բարբարոս ցեղերի կամայականություններին, որովհետև այդ էր փրկության միակ ուղին: Տեղեկանալով, որ այն գյուղը, ուր բնակվում էր Լալան, ենթարկվել է քուրդ ցեղերի ասպատակությանը, Վարդանը հուսահատություն է ապրում. նա ինչ-որ վատ բան էր կանխագուշակում սիրած էակի համար: Նրան մնում էր միայն հուսալ, որ թերևս Լալային հաջողվել է ազատվել աղետից և գաղթել դեպի Ռուսահայաստան: Այդ հույսով Վարդանը գալիս է Էջմիածին: Այստեղ նրա առաջ բացվում են սոսկալի տեսարաններ: Գաղթականների ծանր վիճակը, համաճարակն ու սովը այդ բոլորի հանդեպ «հոգևոր հայրերի» անտարբերությունը, խորապես խոցում է ազնիվ հայրենասերի սիրտը: Բայց Վարդանին չի վիճակվում տեսնել իր սիրած էակին: Նա տեղեկանում է Խաչոյի նահապետական գերդաստանի ողբերգական կործանման մասին, որի վերջին շառավիղը՝ Լալան, զոհ էր գնացել սովին և համաճարակին: Վարդանին մնում էր միայն դառն հուսահատությամբ գրկել սիրած աղջկա շիրիմը և երազել մի պայծառ ու երջանիկ ապագայի մասին:

«Խենթը» վեպում Ռաֆֆին անողոք քննադատության է ենթարկել ոչ միայն թուրքական կառավարությանը, թուրք և քուրդ կեղեքիչներին առհասարակ, այլև ոչ պակաս խստությամբ է դատապարտել սեփական հարստահարիչներին, ի դեմս Թոմաս էֆենդիների և Տեր-Մարուքների: Քուրդ հարստահարիչ Ֆաթթահ բեկը և դավաճան Թոմաս էֆենդին վիպասանի կողմից նույն հարթության վրա են դրված: «Ինչ զանազանություն կար այդ հայի և Ֆաթթահ բեկի մեջ: Այն զանազանությունը միայն, որ մեկը ցած ու խորամանկ հարստահարիչ է, մյուսը՝ քաջ ու մեծահոգի ավազակ» [6, էջ 152]:

Ռաֆֆին ուշադրություն է հրավիրում նաև այն փաստի վրա, թե հասարակության առանձին խավերն ու դասերը ինչ դիրքորոշում ու մասնակցություն ունեին ազատագրական շարժմանը: Մխիթարական ոչինչ չէին խոստանում արտոնյալ դասերը, հասարակության վերնախավերը: Ավելին, տարված իրենց նեղ-դասային շահերով, նրանք բռնում են թուրք կառավարությանը հաճոյանալու, իրենց անձնական շահերի համար ազգի շահերը ոտնահարելու ուղին: Ազգային այդ «երևելիները», որոնք «շողոքորթելով Դռան կամայականությունները, իրենց համար փառք են

դիզում», փաստորեն գործիք են դառնում բռնապետների ձեռքին, որոնք և վարպետորեն օգտագործում են այն, իրենց քաղաքականությանը օրինական ձև տալու համար: «Մեզ հարստահարող, մեզ տանջող, մեզ ստրկացնող, մեզ ոչնչացնող և մեր տունը քանդող գործիքի կոթը մեզանից՝ հայերիցս է,-ասում է Վարդանը,-Թոմաս էֆենդիները, սկսյալ գյուղական մուլթեզիմից մինչև Բարձր Դռան հայ ամիրան, այս տեսակ կոթեր են թշնամիների ձեռքում» [6, էջ 273]:

Այդ եղկելի դերն է կատարում հայ վաճառված պաշտոնյան, որի տիպիկ օրինակն է ներկայացրել Ռաֆֆին Թոմաս էֆենդու կերպարով: Ստորաքարշություն անելով տերերի առաջ և ձգտելով ցույց տալ իր նվիրվածությունը, այդ վաճառված էակը դիմում է բոլոր միջոցներին՝ իր ժողովրդին ավելի հարստահարելու, խոշտանգելու համար, բռնաբարության, մատնության և այլ ոճրագործությունների մեջ անցնելով օտարազգի ամեն մի բռնակալից: Թոմաս էֆենդու մոտ մարդկային ամեն մի հատկանիշ ենթարկված է հարստահարչի ստոր հոգեբանությանը: «Հարստահարիչը ուղիղ ճանապարհով չի դիմում նպատակին,-գրում է Ռաֆֆին,-նա շրջում է ծուռ ու մուռ շավիղների մեջ: Հարստահարիչը այն տեսակ որսորդներից է, որ որոգայթներ է լարում, դավեր է դնում, ծուղակներ է դնում իր որսը բռնելու համար» [6, էջ 250]:

Այսպիսին է նրա գործելակերպը: Իր դիրքը հաստատուն պահելու համար նա մատնում է հայ հայրենասերներին՝ Վարդանին, Դուդուկչյանին: Լալային տիրանալու համար նա բանտարկել է տալիս ծերունի Խաչոյին ու նրա որդիներին և պատճառ դառնում այդ նահապետական գերդաստանի կործանման:

Անխնա մերկացնելով ազգային հարստահարիչներին, Ռաֆֆին հաստատում է այն գաղափարը, որ առանց այդպիսի խոցերի ոչնչացման՝ հնարավոր չէ կենսագործել ազատագրական պայքարի իդեալը:

Այդպիսին են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմական հանգամանքները. ակնհայտ են ազատագրական պայքարի և՛ ուժը, և՛ թուլությունը:

Պատմական պայմանների նկարագրմամբ Ռաֆֆին հանդես է բերել իր գաղափարական հերոսներին, որոնք և պետք է պատասխան տային առաջադրված հարցին: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի որոշակի միտումների արտահայտիչը Դուդուկչյանն է: Նա ունի ազատագրական պայքարի փիլիսոփայություն: Նրա տեսակետով, ինչպես բնության ամեն մի էակի, նույնպես և մարդուն հատուկ է ինքնապաշտպանության բնազդը: Ինչպես կենդանի բնության

մեջ, նույնպես և ազգը մարդկային հասարակության մեջ առանց ինքնապաշտպանության բնազդի՝ ենթակա է ոչնչացման: «Բնությունը,-ասում է Դուդուկչյանը,-բոլոր էակներին, որոնք աճելու և բազմանալու ունակություն ունեն, տվել է իրանց նմանների հետ կռվելու ընդունակություն, մեկին շատ, մյուսին սակավ: Ծառերը, խոտերը, անասունները և մարդիկ ևս ունեն այդ ընդունակությունը: Միայն քարերը, փայտը, մեռած մարմինները մնում են անշարժ և իրանց անձը պաշտպանել չգիտեն, որովհետև նրանք կյանք չունեն: Բայց ուր կյանք կա, այնտեղ կա և այդ բնական կռիվը: Դա կյանքի կռիվ է, որի մեջ ամեն մի էակ ոչ միայն աշխատում է պահպանել իր գոյությունը, այլ աշխատում է և ոչնչացնել իր թշնամիներին, որպեսզի իր աճելիությունն ապահով և անարգել կերպով կատարվի» [6, էջ 194]:

Գոյության կռիվը ազգերի և ժողովուրդների մեջ տեղի է ունենում տարբեր միջոցներով: Մի դեպքում միջոց կարող է լինել տնտեսական գերիշխանությունը, երկրորդ դեպքում՝ գիտությունն ու մշակույթը, մի այլ դեպքում՝ բռնի հպատակեցումը: Ուստի, նայած ինչպիսի ձև է ստանում գոյության կռիվը, ըստ այնմ էլ պետք է յուրացնել դիմադրության զենքը՝ մրցակցությանը կուլ չգնալու համար: «Անձնապաշտպանության օրենքները պահանջում են պատասխանել թշնամուն նույն զենքով, ինչ զենքով որ նա ճնշում է և մահացնում է մեզ» [6, էջ 195]: Հայերը Թուրքիայի տիրապետության տակ ենթակա են գոյության կռվի բարբարոսական ձևերին, ուստի հայերը նույնպես պետք է տիրապետեն զենքին, այնպես նրանց սպասում է ֆիզիկական բնաջնջում, անողոք պարտություն՝ գոյության կռվի մեջ: «Պետք է սովորենք անձնապաշտպանություն, որպեսզի քրդերը և թուրքերը մեզ չոչնչացնեն» [6, էջ 195],-ասում է Դուդուկչյանը: Նա, իհարկե, միանգամից չի դնում զինված ապստամբության պահանջը, քանի որ այդ դիտում էր իբրև ապագայի հեռանկար, բայց պահանջում էր սովորել ակտիվ անձնապաշտպանություն՝ ազգի գոյությունը պահպանելու համար:

Սալմանը տեսականորեն չի մերժում ապստամբությունն իբրև ժողովրդի ապստամբության ազատագրության միջոց: Ընդհակառակը, նա էլ մի ժամանակ ապրել է ժողովրդական շարժման ոգևորությունը: Նրա հեղափոխական տրամադրությունը հեղինակը ավելի ցայտուն արտահայտել է երազային ցնորքների մի բնորոշ պատկերով. «Գյուղացինե՛ր… հասավ ժամը… ձեր արյունով պիտի գնեք… ձեր ազատությունը… ներկան… ապագան մեզ է պատկանում, ցույց տվեք… որ թուրքի… երկաթի գավազանը… բոլորին չի մահացրել… ձեր մեջ կյանքը… և…ազատության

զգացմունքը… Կրակի և սրի մեջ… պիտի գնենք… մեր փրկությունը… Դեպ առա՛ջ… քաջե՛ր…»[6, էջ 178]: Լսելով Դուդուկչյանի զառանցանքը՝ Վարդանը ավելացնում է. «Հայ գյուղացու ողորմելի օդայի մեջ իրան Փարիզի բարիկադների վրա է երևակայում և ճառ է խոսում» [6, էջ 179]:

Այս խոսքերը մոտավորապես զուգադիպում են «Հայ երիտասարդությանը» գրքի այն տողերին, ուր Ռաֆֆին մեծ ոգևորությամբ փառաբանում է Փարիզի հեղափոխական երիտասարդությանը, որը զենքը ձեռքին պայքարում էր ազատության համար՝ Կոմունայի հերոսական օրերին: «Երբ պատահում է մի ժողովրդական շարժում,-գրում է Ռաֆֆին,-երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, ուսանողներն խլրտվում են, զարթնում են որպես քնած առյուծ և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարսելյոզներով, փշրում են բռնակալների արձանները և թռչում են բարիկադների վրա: Ով փոքր ի շատե ծանոթ է Ֆրանսիայի պատմությանը, գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում և մանավանդ Կոմունայի ժամանակ» [8, էջ 92]:

Դուդուկչյանը կքարոզեր ապստամբական պայքար, նա ժողովրդին կդրդեր զինված պայքարի, եթե վերջինս պատրաստված լիներ: Նրա իրավացի համոզմամբ, ապստամբության հիմնական շարժիչ ուժը ժողովուրդն է, և ազատագրության ոգին անխորտակ է միայն այն դեպքում, երբ նա տիրապետում է ժողովրդին. «Երբ որևիցե ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն և տակավին չի ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնե մի մասի մեջ, մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինք ոչնչացված կլինեն: Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է» [6, էջ 186]:

Ուրեմն ազատագրական պայքարի իդեալը կենսագործելու համար անհրաժեշտ է, որ ամբողջ ժողովուրդը զինվի համապատասխան գաղափարախոսությամբ, ազատության գաղափարը տիրապետի նրա գիտակցությանը: Առանց այդ նախապայմանի, ավելորդ է ամեն մի շարժում: Ահա թե ինչու Դուդուկչյանը տվյալ պահին չի հավատում ապստամբական ծրագրերի իրականությանը և առաջադրում է շարժման նախապատրաստության մի ուրույն ծրագիր:

Այստեղից հետևում է Դուդուկչյանի անխնա քննադատությունը հասարակական այն ենթակառուցվածքների, որոնք խանգարում են ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը: Նա դատապարտում է հոգևորականությանը, որը թաղված ճղճիմ հաշիվների մեջ, բոլորովին անտարբեր է դեպի ժողովրդի ստրկական վիճակը, նա քննադատում է հայ մամուլն ու

գրականությունը, որոնք չեն արտացոլում հայ ժողովրդի ճշմարիտ կացությունը և չեն բորբոքում ստրկական կապանքները խորտակելու ոգին. նա քննադատում է և հայ թատրոնը, որ բեմի վրա հանդես չի բերում «հայաստանցու թշվառ պատկերը և կերակրում է հասարակությանը ֆրանսիական խոհանոցի աղտեղություններով» [6, էջ 197]:

Դուդուկչյանը մերժում է համբերության բարոյափիլիսոփայությունը, նա ժողովրդից պահանջում էր իր վիճակի ինքնագիտակցում, զրկանքների հանդեպ՝ ակտիվ ընդվզում. «Համբերությունը մահ է. գերեզմանի մեջ միայն մարդը կարող է համբերող լինել… Մեր տերտերները, մեր վարդապետները համբերություն են քարոզում… Ախար նրանք քանդեցին մեր տունը և ստրկական վիճակին հասցրին մեզ: Եթե կա մի բան, որը կարող է փրկել հարստահարված և ճնշված ժողովուրդներին, դա է բողոքը, ինչ կերպով և հայտնելու լիներ նա: Դժգոհությունը, տրտունջը և իր վիճակից մի ավելի բարեբախտ վիճակի ցանկանալը, ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել ստրկությունից: Բայց համբերության մեջ խեղդվում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները» [6, էջ 177] :

Ուրեմն պետք է վերափոխել ժողովրդին, պետք է թոթափել միջնադարյան խավարամտությունը, հանգեցնել նրան քաղաքական ինքնագիտակցության և այսպիսով հիմք դնել նրա ազատագրության գործին: Այդ խնդիրների իրականացման լավագույն միջոցը Դուդուկչյանը համարում է լուսավորությունն ու դպրոցը. «Որքան բախտավոր, որքան ընդարձակ ապագա է խոստանում մեզ դպրոցը: Նա կտա մեզ բոլորը, ինչ-որ մենք ցանկանում ենք: Նա միայն կբուժի մեր դարավոր վերքերը և կպատրաստե նոր սերունդ մի առողջ և թարմ կյանքի համար» [6, էջ 182]:

Ազգային-ազատագրության գաղափարը Րաֆֆու հերոսների մոտ բնավ էլ չի հանգում սոսկ թուրքական բռնատիրությունը թոթափելու նպատակին: Ո՛չ, նրանց հեռանկարներն ու գործունեության իմաստը անհամեմատ ավելի լայն են, այն է՝ ֆեոդալական ամեն տեսակ հակասությունների և սոցիալական անհավասարության ոչնչացում:

Րաֆֆու սոցիալական ապագայի տեսլականը ցայտուն է դրսևորվել Վարդանի երազում: Բայազետում Վարդանի հերոսական արարքից հետո, Րաֆֆին հետ է տեղափոխում ընթերցողին մի քանի տարով: Պատերազմը դեռ չի սկսվել: Ալաշկերտի գավառի Օ. գյուղը ապրում է իր սովորական առօրյայով: Խաղաղ է նաև տանուտեր Խաչոյի բազմանդամ նահապետական ընտանիքը: Նրա հարկի տակ հաճախ հավաքվում են երկրի տարբեր կողմերից եկած հայ

գործիչներ, որոնք քննարկում են հայ ժողովրդի վիճակը և այդ կացությունից դուրս գալու ուղիները: Խաղաղությունը, սակայն հարաբերական էր, մի կողմից քրդերն իրենց Ֆաթթահ Բեկի գլխավորությամբ անընդհատ կողոպտում են հայերին, մյուս կողմից Թոմաս Էֆենդին՝ հարկեր հավաքողը, լինելով հայ, կեղեքում է յուրայիններին: Ցանկանալով տիրանալ Լալային՝ էֆենդին դավադրաբար կործանման է մղում ծերունի Խաչոյի գերդաստանը: Վարդանը, որ այդ ընթացքում գտնվում էր Բայազետի բերդում, անտեղյակ էր կատարվածից: Իմանալով եղելությունը՝ Վարդանը գնում է Ռուսահայաստան: Նա հույս ուներ գտնել Լալային, սակայն գտնում է նրա թարմ հողաթումբը միայն:

Փշրված հոգով գրկելով սիրած աղջկա գերեզմանը՝ Վարդանը, անհուն տառապանքներից հոգնած, խոր քուն է մտնում և երևակայությունը երազի թևով նրան տեղափոխում է ապագա՝ վերածնված Հայաստան: Բնաշխարհը ծանոթ է նրան. նույն բնությունը, լեռները, դաշտերը, գետերն ու անտառները: Բայց ինչպե՞ս է փոխվել կյանքը, ինչպե՞ս են փոխվել մարդիկ. երբեմնի խարխուլ ու գետնափոր հյուղակների փոխարեն կառուցվել են բարեկարգ գյուղեր ու քաղաքներ, հետամնացության ու գռեհկության երբեմնի բարքերի հետքն անգամ չի մնացել և ամենուրեք տիրապետում է «կրթության ոգին», ամեն ինչ ղեկավարվում է բանականության օրենքներով:

Նոր Հայաստանի պատկերը լիովին տարբերվում էր Վարդանի ապրած ժամանակներից: Փոխվել էր ամեն ինչ: Առաջին հերթին ակնհայտ էր գյուղացիության պատկերի փոփոխությունը: Նախկին՝ հեզ, անմեղ, վախվորած, թույլ գյուղացիները դարձել էին արի, քաջ, խիզախ գյուղացիներ: Այլևս չկային անգութ հարկահավաքներ, ովքեր հափշտակում էին անմեղ գյուղացիների օրվա վաստակը: Դա մի դրախտ էր, ուր մարդն է ստեղծում իր համար իր աշխատանքով և իր արդար քրտինքով, ուր անմեղության փոխարեն տիրում էր խելացի գիտակցությունը, իսկ անհոգ, պարզ նահապետական կյանքը վերածվել էր զարգացած քաղաքակրթության:

Հասարակությունը հասել է բարձր մակարդակի. կառուցվել էին բարեկարգ դպրոցներ, մասնագիտական ուսումնարաններ, հիվանդանոցներ, համալսարան, թանգարաններ, գիտությունների ակադեմիա: Վերափոխվել էր մարդը. չքացել էր եսասիրության ճղճիմ հոգեբանությունը և յուրաքանչյուր անհատ մտահոգվում էր հասարակության բարօրության խնդրով:

Վարդանի երազած ապագայի հասարակությունը աշխատանքի կատարյալ թագավորություն էր: Այլևս չկար բռնի աշխատանք, հասարակության բոլոր անդամները օգտվում էին ազատ աշխատանքի իրավունքից: Մարդը հասել էր հանրային սեփականության և համատեղ աշխատանքի գիտակցությանը:

Սոցիալական այս ուտոպիան չափազանց կարևոր է Ռաֆֆու աշխարհայացքի բնութագրման տեսակետից: Նրա կարևորագույն արժանիքն այն է, որ, ըստ էության, ժխտում է հասարակական բոլոր տիպի կապանքները և երազում հակասություններից ազատ, ներդաշնակ կյանքի իդեալը:

Վեպում առկա են նաև կնոջ դերի մասին առաջադեմ պատկերացումներ, օրիորդաց դպրոցների անհրաժեշտության թեման ևս արծարծված է «Ոչինչ վերանորոգություն մի ժողովրդի կյանքում չէ կարելի կատարել առանց կնոջ մասնակցության: Եթե մեր ժողովուրդը մնացել է անշարժ, դրա գլխավոր պատճառը այն է, որ կինը չէ մասնակցում հասարակական գործերի մեջ» [6, էջ 210-211] :

Վեպի հերոսներից մեկը՝ Թոմաս Էֆենդին, ներկայացնում է իր հոգեփոխության գաղափարախոսությունը: Նա անցել էր բազում անմաքուր կենդանիների մարմնի միջով, իսկ վերջում՝ առյուծի մարմնում նրա հոգին մաքրազերծվել էր: Նույնիսկ Թոմաս էֆենդու նման չարագործները հասել են մարդկային արժանապատվության գիտակցության: Մարդը ազատագրվել է խայտաբղետ կապանքներից և հասարակական ներդաշնակ կազմակերպության մեջ ստեղծում է անհատականության իր իրավունքը:

Վերլուծելով այս վեպը՝ նկատում ենք, որ Վարդանը հեղինակի գաղափարների կրողն է: Այդտեղից կարող ենք հետևություն անել, որ Ռաֆֆին տեսնում էր հայոց աշխարհի պայծառ ապագան, սակայն չէր ներկայացնում դրան հասնելու ուղիներն ու ճանապարհները: Այս վեպից կարող ենք նաև եզրակացնել, որ Ռաֆֆին, չնայած իր ապրած ժամանակների ծանր իրադրությանը, տեսնում և հավատում էր իր երկրի լավ ապագային:

Եզրակացություն

Այսպիսով՝ 1877–78 թթ.-ի ռուս-թուրքական պատերազմի տարիներին նկատելի աշխուժացել էր հայ ազգային-ազատագրական շարժումը: Շատերը լիահույս էին, որ ռուսների հաղթանակով Արևմտյան Հայաստանը կազատագրվի թուրքական լծից: Րաֆֆին, սակայն, համոզված էր, որ ամեն ազգ իր ազատությունը պետք է նվաճի սեփական ուժերով: Վերլուծելով ազատագրական շարժման իրական հանգամանքները և միանգամայն ապարդյուն համարելով Հայկական հարցի լուծման եվրոպական դիվանագիտության ուղին, Րաֆֆին առաջադրում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը, զինված ապստամբությունը: Այս գաղափարները մարմնավորել և նրա այս ծրագրի գեղարվեստական արտահայտությունն է հանդիսացել «Խենթը» (1881) վեպը:

Մեծ վիպասանը գիտակցում էր, որ թուրքերի վարած հայահալած քաղաքականության դեմ հարկավոր էր կիրառել մի միջոց, որի շնորհիվ հայ ժողովրդի մեջ կարթնանար հարենասիրական ոգի, սեփական անկախ երկրի պաշտպանության անհրաժեշտության զգացում: Այդպիսի միջոց կարող էր հանդիսանալ ժողովրդի մեջ հայրենասիրական գաղափարներ սերմանելը:

Այսպիսով՝ «Խենթը» վեպը ռուս-թուրքական պատերազմի գեղարվեստական արձագանքն է: «Խենթը» հարուստ է իր բովանդակությամբ: Նա տալիս է կյանքի համակողմանի պատկերներ, ասպարեզ բերում նոր մարդկանց, արտահայտում նոր գաղափարներ, որոնք այժմ էլ արդիական են: Այսօրվա սերունդը պիտի գիտակցի, որ դեռևս 19-րդ դարում Րաֆֆու պատկերած հայկական իրականությունը՝ խավարամտությունն ու շահամոլությունն են եղել ազգային ամուր պետականություն չունենալու գլխավոր պատճառները: Հայ աշակերտը պարտավոր է գիտակցել, որ պետության շահը կարևորագույնն է, և հանուն հայրենիքի թափված ոչ մի կաթիլ արյունն իզուր չի եղել:

Առաջարկություն: Մեր կարծիքով, հատկապես ներկա պայմաններում, արժե սովորողներին առավելագույնս համախմբել Րաֆֆու առաջ քաշած տեսակետի շուրջ: Այս նպատակով կարելի է առավել մեծ ուշադրություն սևեռել ոչ թե Րաֆֆու ուտոպիստական հայացքներին, ինչպես այժմ է արվում, այլ կարևորել նրա կերտած երիտասարդ կարող ուժերի տեսակետները, և դասագրքում ընդգրկել ոչ միայն Վարդանի երազը, այլև տանուտեր Խաչոյի և որդու՝ Հայրապետի, Դուդուկչյանի,

Վարդանի երկխոսությունները հայերի ունեցած կարգավիճակի մասին: Կարծում ենք այդ հատվածները կարող են ավելի ուսուցողական լինել և թեժ բանավեճում կարող են նպաստավոր եզրահանգումների բերել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խուդինյան Գ., Րաֆֆու ազգային-ազատագրական գաղափարախոսության ուսումնասիրության պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, 3(57),ԵՀ հարտ., Երևան, 1985թ.:
2. Ղազարյան Լ., Րաֆֆու «Կայծեր» վեպը և նրա առաջին ընթերցողները, Բանբեր Երևանի համալսարանի, 3(57),ԵՀ հարտ., Երևան, 1985թ.:
3. Պետրոսյան Ե., Րաֆֆի. կյանքը և ստեղծագործությունը, Հայպետհրատ, Երևան, 1959թ.:
4. Սարինյան Ս., Րաֆֆի. գաղափարների ու կերպարների համակարգը, Երևան, 1985:
5. Սարինյան Ս., Հայ գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2004:
6. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր 3, Հայպետհրատ, Երևան, 1955թ.
7. Րաֆֆի, Երկերի ժողովածու տասներկու հատորով, հատոր 11, Հայպետհրատ, Երևան, 1991թ:
8. Րաֆֆի, Հայ կինը և հայ երիտասարդությունը, Թիֆլիս, 1890: